ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության՝ 1988 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 65-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9^1-րդ կետով.

«9^1) կալանքի տակ գտնվելու ընթացքում անարգել տեսակցել իր մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ՝ բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի.»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 153^1-րդ, 153^2-րդ, 153^3-րդ և 153^4-րդ հոդվածներով.

«Հոդված 153^1. Կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ արգելելը

1. Բացառիկ դեպքերում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կալանքի տակ գտնվելու ընթացքում կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են պատճառաբանված միջնորդություն հարուցել դատարան՝ կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ արգելելու մասին:

2. Միջնորդություն հարուցելու որոշումը դատարան է ներկայացվում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու

դատախազի կամ քննիչի միջնորդության հետ միաժամանակ կամ առանձին՝ քրեական գործով վարույթի այլ պահի, երբ առկա են սույն հոդվածի առաջին մասում նշված հանգամանքները: Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն բոլոր այն հիմնավորումները, որոնց հիման վրա առաջացել է տվյալ դատավարական հարկադրանքի միջոցը կիրառելու անհրաժեշտություն:

Հոդված 153[2]. Կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ արգելելու մասին միջնորդության քննարկման և բողոքարկման կարգի առանձնահատկությունները

1. Այն դեպքում, երբ միջնորդությունը դատարան է ներկայացվում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդության հետ միաժամանակ, ապա դրա քննարկման և բողոքարկման կարգի վրա վերաբերելի մասով (mutatis mutandis) տարածվում են սույն օրենսգրքի 285-րդ և 287-րդ հոդվածներով սահմանված նորմերը: Առանձին միջնորդություն դատարան ներկայացնելու դեպքում դրա քննարկումը և բողոքարկումը կատարվում է սույն օրենսգրքի 283-րդ և 289-րդ հոդվածներով նախատեսված կանոններով:

2. Դատավարական հարկադրանքի միջոց կիրառելու մասին դատարանը կայացնում է պատճառաբանված որոշում, որի պատճենն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, ուղարկում է կալանավորված անձին, նրա պաշտպանին՝ քրեական գործով վարույթին մասնակցության դեպքում, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

Հոդված 153[3]. Կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ արգելելու մասին միջնորդությունը վերանայելու երաշխիքը

1. Դատարանը կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշում կայացնելու հետ միաժամանակ յուրաքանչյուր անգամ պետք է քննարկման առարկա

դարձնի նաև տվյալ դատավարական հարկադրանքի միջոցի ժամկետի երկարացման շարունակման անհրաժեշտության և իրավաչափության հարցերը:

Հոդված 153[4]. Կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ արգելելու ձևով դատավարական հարկադրանքի միջոցը վերացնելու պարտականությունը

1. Այն դեպքում, երբ վերանում է կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ արգելելու հետագա անհրաժեշտությունը, ապա դատարանը կամ դատախազը, ինչպես նաև վերջինիս համաձայնությամբ՝ քննիչը պարտավոր են իրենց որոշմամբ վերացնել այն: Դատավարական հարկադրանքի միջոցը վերացնող մարմինն անհապաղ կալանավորված անձին, նրա պաշտպանին՝ քրեական գործով վարույթին մասնակցության դեպքում, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին է ուղարկում իր համապատասխան որոշման պատճենը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ մասում «խափանման միջոցները» բառերից հետո լրացնել «, կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ արգելելը» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի 15-րդ հոդվածի.

1) 9-րդ պարբերությունից հանել «կամ կալանավորված» բառերը,

2) 9-րդ պարբերությունից հետո ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր 10-րդ պարբերություն.

«Կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ արգելելը կատարվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: Կալանավորված անձի տեսակցությունները զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ արգելելը կատարվում է ձերբակալված անձանց համար՝ սույն հոդվածով նախատեսված կարգով»:

3) 10-րդ, 11-րդ և 12-րդ պարբերությունները համարել համապատասխանաբար 11-րդ, 12-րդ և 13-րդ պարբերություններ:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

«____» «_____» 2017 **թվականի** N _____ **Ն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 1543-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված հավելվածի XVI-րդ գլխի 137-րդ կետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կալանավորված անձին մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցությունն արգելելը թույլատրվում է միայն դատարանի որոշման հիման վրա: Մինչև դատարանի համապատասխան որոշումը ստանալն անձին տեսակցության տրամադրումը չի կարող արգելվել:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 1543-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. **<u>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</u>**

Օրենսդրական փաթեթի ընդունումը մեծապես պայմանավորված է մեր երկրի իրավակիրառ պրակտիկայում ներկայում լայնորեն տարածում ստացած այն մոտեցումը բացառելու անհրաժեշտությամբ, երբ քրեական վարույթն իրականացնող մարմինն առանց հիմնավոր պատճառաբանության որոշում է ընդունում կալանավորված անձին մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցությունն արգելելու մասին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների քննարկման, ինչպես նաև ազատությունից զրկման վայրեր կատարած այցերի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործառույթներն իրականացնող ստորաբաժանման ուսումնասիրությունները վկայում են, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորված անձի տեսակցություններն արգելող որոշումները ոչ միշտ են պատճառաբանված լինում: Ավելին, Պաշտպանին հասցեագրվել են նաև բողոքներ այն մասին, որ քրեական վարույթն իրականացնող մարմինն ընդհանրապես համապատասխան որոշում չի կայացրել՝ բավարարվելով միայն կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին գրություն հասցեագրելով: Որոշ դեպքերում էլ քրեական վարույթն իրականացնող մարմինն

անհարկի ձգձգում է կամ ընդհանրապես չի քննարկում հիշյալ սահմանափակման հետագա կիրառման անհրաժեշտության հարցը:

Այս առումով, արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու և մերձավոր ազգականների հետ տեսակցելու իրավունքի իրացման ուսումնասիրությունը ցույց է տվել, որ պրակտիկայում կալանավորված անձանց վերոնշյալ սահմանադրական իրավունքներն չեն ապահովվում, որը, ի թիվս այլնի, պայմանավորված է նաև օրենսդրական թերի և ոչ հստակ կարգավորումներով:

ՀՀ օրենսդրությունն այս առումով թեև բովանդակում է որոշակի կարգավորումներ, այնուհանդերձ դրանք բավարար չեն իրավունքի իրական երաշխավորման համար: Այսպես, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասը է, որ քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունը օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ այն չի պարունակում կալանավորված անձի՝ օրինական ներկայացուցչի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության արգելքի կիրառելիության հստակ չափանիշներ՝ այն կապելով միայն «քննության շահ» գնահատողական և որոշակիության սկզբունքին չհամապատասխանող եզրույթի հետ: Միաժամանակ, հոդվածը չի բովանդակում տեսակցությունների արգելքի պատճառաբանության և հիմնավորվածության, ինչպես նաև որոշման պարբերական վերանայման վերաբերյալ հստակ պահանջներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն օրենսդրական փաթեթի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ներպետական օրենսդրության կարգավորման թերությունները վերացնելու, այնպես էլ ոլորտը կանոնակարգող

օրենսդրությունը միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (այսուհետ՝ ԽԿԿ) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) ընդունված մոտեցումներին և սկզբունքներին համապատասխանեցնելու պահանջով:

Այսպես, ԽԿԿ-ի իրավաբանության համաձայն՝ ազատազրկված անձանց համար շատ կարևոր է բավարար շփումն արտաքին աշխարհի հետ: Առաջին հերթին կալանավորված անձը պետք է հնարավորություն ստանա պահպանելու հարաբերություններն իր ընտանիքի և մերձավոր ազգականների հետ: Ղեկավար սկզբունք պետք է լինի՝ արտաքին աշխարհի հետ շփման աջակցությունը: Այդպիսի շփման որևէ սահմանափակում պետք է հիմնավորված լինի միմիայն անվտանգության շահերի ողջամիտ պաշտպանությամբ (…)[1]:

Այս առումով, ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2011 թվականի զեկույցում նշել է, *որ անհրաժեշտ է ձեռնարկել արդյունավետ քայլեր՝ ապահովելու համար, որ ազատությունից զրկված անձանց՝ տեսակցություններ ունենալու և հեռախոսակապից օգտվելու իրավունքներն անհիմն կերպով չսահմանափակվեն*[2]*:*

Կալանավորված անձանց ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու կարևորությունն ընդգծվել է նաև «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի 2-րդ մասի 24.1-րդ կանոնում, ըստ որի՝ *ազատությունից զրկված անձանց պետք է թույլատրվի հնարավորին չափ հաճախ նամակների, հեռախոսակապի կամ հաղորդակցության այլ ձևերով հաղորդակցվել իրենց ընտանիքների, այլ անձանց և արտաքին կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տեսակցել թվարկված անձանց հետ:*

Դրա հետ մեկտեղ ըստ 24.2-րդ կանոնի՝ *հաղորդակցությունները և տեսակցությունները կարող են ենթարկվել սահմանափակումների կամ վերահսկման*

---

[1]Տե՛ս 1991 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ԽԿԿ-ի գործունեության մասին 2-րդ ընդհանուր հաշվետվության 51-րդ կետը:

[2]Տե՛ս ԽԿԿ-ի զեկույցը 2010թ. մայիսի 10-ից 21-ը Հայաստան կատարած այցի վերաբերյալ: Փաստաթուղթ թիվ CPT/Inf (2011) 24, կետ 124-126: Զեկույցի ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով. http://www.cpt.coe.int/documents/arm/2011-24-inf-eng.pdf:

ելնելով՝ քրեական գործի քննությունը շարունակելու անհրաժեշտությունից, կարգուկանոնի պահպանման, ապահովության և անվտանգության, ինչպես նաև հանցագործության կանխարգելման և հանցագործությունից տուժածների պաշտպանության համար: Այնուհանդերձ, այդ սահմանափակումները, ներառյալ՝ դատական մարմինների որոշումներով նախատեսված կոնկրետ սահմանփակումները, պետք է ցանկացած պարագայում թույլատրեն շփումների թույլատրելի նվազագույն մակարդակ:

Միաժամանակ, 99-րդ կետի համաձայն՝ *ազատությունից զրկված անձինք պետք է ունենան տեսակցություններ և պահպանեն կապն ընտանիքի և այլ անձնաց հետ այնպես, ինչպես դա նախատեսված է դատապարտյալների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին գործով դատական մարմնի կողմից որոշակի ժամանակահատվածով կիրառվել է արգելք:*

Հիշյալ կանոնների մեկնաբանությունների համաձայն՝ այն կանոնները, որոնց հիման վրա կիրառվում է սահմանափակումն ունեն կարևոր նշանակություն: Դրանք պետք է հստակ ձևակերպված լինեն, «համապատասխանեն գործող օրենսդրությանը», ինչպես պահանջում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասը և չպետք է թողնվեն ազատությունից զրկման վայրի վարչակազմի հայեցողությանը *(տե՛ս Լաբիտան ընդդեմ Իտալիայի գործով 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգատ թիվ 26772/095):* Սահմանափակումները պետք է հասցվեն նվազագույնի և համապատասխանեցվեն անձի անհատական ռիսկայնության աստիճանին: Այսպես, օրինակ՝ նամակագրությունը կարող է ենթարկվել ստուգման (արտաքին զննման)՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով, սակայն նամակագրության բովանդակությանը ծանոթանալը հնարավոր է միայն այն դեպքում, երբ առկա է հստակ տեղեկություն այն մասին, որ նամակագրության բովանդակությունը հակահիրավական բնույթ է կրում: Այն

դեպքում, երբ առկա է անվտանգության սպառնալիք պետք է ոչ թե չտրամադրել տեսակցություններ, այլ ուժեղացնել հսկողություն դրանց անցկացման ընթացքում[3]:

Հանցագործությունների կանխմանն ու իրավախախտների հետ վարվեցողությանը նվիրված ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները» նույնպես պարունակում են դրույթներ ազատությունից զրկված անձանց շփումն արտաքին աշխարհի հետ ապահովելու նպատակով: Այսպես, ըստ ստանդարտ կանոնների 37-րդ կետի՝ *ազատությունից զրկված անձանց պետք է հնարավորություն տալ ինչպես գրավոր հաղորդակցության կարգով, այնպես էլ այցելությունների ընթացքում, կանոնավոր ժամանակահատվածների ընդմիջումով և հարկ եղած վերահսկողության տակ կապ պահպանել իրենց ընտանիքների և անբասիր վարկ ունեցող ընկերների հետ*:

Հատկանշական է, որ ազատությունից զրկված անձանց տեսակցության իրավունքն ուղղակիորեն փոխկապակցված է վերջիններիս երեխաների հիմնարար իրավունքների հետ, որոնք, մասնավորապես, սահմանված են «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 9-րդ հոդվածով, որի համաձայն՝ *համապատասխան պետական մարմինները պետք է ապահովեն երեխաների՝ իրենց ծնողների հետ կապ պահպանելու իրավունքի իրականացումը (…)*:

Որոշ երկրներում առկա հեռախոսազանգերի կամ տեսակցությունների հնարավորության բացարձակ արգելքի վերաբերյալ ԽԿԿ-ն նշել է, որ նման սահմանափակումների անխտիր կիրառումը բոլոր կալանավորված անձանց նկատմամբ անընդունելի է. ցանկացած սահմանափակում պետք է հիմնված լինի ազատությունից զրկված անձի անհատական ռիսկայնության մանրակրկիտ գնահատման վրա:

Նման հաղորդակցության թույլատրման ցանկացած սահմանափակում պետք է հստակորեն հիմնավորվի նախաքննության պահանջներով, ենթակա լինի դատական հաստատման և կիրառվի հստակ ժամանակահատվածի համար:

---

[3] Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի մեկնաբանությունները, էջ 13 (հասանելի է հետևյալ կայքում՝ http://www.refworld.org.ru/docid/55c36e8b4.html 15.05.2017 թվականի դրությամբ):

Նշված սահմանափակումների կիրառման որոշումները, որպես կանոն, պետք է կայացվեն դատարանի կողմից կալանավորված անձի ներկայությամբ և ենթակա լինեն բողոքարկման առանձին ընթացակարգով: Գրավոր որոշումը պետք է պարունակի կիրառված յուրաքանչյուր սահմանափակման հիմքերը և պետք է տրամադրվի ազատությունից զրկված անձին և(կամ) նրա փաստաբանին: Սահմանափակումները պետք է պարբերաբար վերանայվեն դատարանի կողմից՝ դրանց շարունակական անհրաժեշտության առկայությունը քննարկելու համար: Որքան երկար ժամանակահատվածի համար է նախատեսված կալանավորված անձի նկատմամբ կիրառված սահմանափակումը, այդքան խիստ պետք է լինի սահմանափակման անհրաժեշտության և համաչափության վերանայումը[4]*:*

Այսպիսով, միջազգային և ներպետական իրավական կարգավորումների լույսի ներքո մանրազնին վերլուծության ենթարկելով ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելն արգելելու հարցերը՝ կարելի է ենթադրել, որ.

1. <u>ինքնին քրեական գործի քննության փաստը չի կարող հանդիսանալ ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունքի սահմանափակման հիմք: Նման հաղորդակցման ցանկացած սահմանափակում պետք է ունենա հատուկ և անհատականացված հիմնավորում,</u>

2. <u>տեսակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակից պետք է առանձնացնել ազատությունից զրկվածի ընտանիքի անդամներին կամ մերձավոր ազգականներին ու նրանց հետ տեսակցելու իրավունքը սահմանափակելու հնարավորության համար նախատեսել ավելի խիստ պահանջներ.</u>

3. <u>ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ ձերբակալվածի կամ կալանավորվածի տեսակցության իրավունքը սահմանափակելու լիազորությամբ պետք է օժտված լինի դատարանը,</u>

---

[4] Տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 3-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1992 թվականի հունվարի 1-ից դեկտեմբեր 31-ն ընկած ժամանակահատվածը, կետեր 59-61,63, ինչպես նաև ԽԿԿ-ի 2010 թվականի փետրվարի 5-ից 15-ը Վրաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույցը, կետ 108:

4. այս իրավունքը սահմանափակող որոշումները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

5. դրանք պետք է անհապաղ հանձնվեն կալանավորվածին և(կամ) նրա փաստաբանին՝ բողոքարկման իրավական հնարավորությունից լիարժեք օգտվելու նպատակով,

6. ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունքը սահմանափակող որոշումը պետք է պարբերաբար վերանայվի՝ անկախ ազատությունից զրկված անձի ցանկությունից կամ վերաբերմունքից:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Ելնելով վերոգրյալից՝ սույն նախագծով առաջարկվում են կարգավորումներ, որոնք ուղղված են կալանավորված անձի՝ մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցությունն արգելելու հստակ մեխանիզմի նախատեսմանը, ազգային օրենսդրության միջազգային չափանիշներին համապատասխանության ապահովմանը:

Մասնավորապես՝ առաջարկվում է.

1. կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների և օրինական ներկայացուցչի հետ արգելելը նախատեսել որպես դատավարական հարկադրանքի միջոց,

2. նշված դատավարական հարկադրանքի միջոցը կիրառել միայն դատարանի հիմնավորված և պատճառաբանված որոշմամբ՝ դատախազի կամ դատախազի համաձայնությամբ քննիչի միջնորդությամբ,

3. սահմանել դրա քննարկման հստակ ընթացակարգ (կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու դատախազի կամ քննիչի միջնորդության հետ միաժամանակ կամ առանձին՝ քրեական գործով վարույթի ցանկացած այլ պահի, երբ առկա են դրա համար օրենքով նախատեսված հիմքերը),

4. նախատեսել դատավարական հարկադրանքի նշված միջոցը կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, կալանավորված անձին, նրա պաշտպանին՝ քրեական գործով վարույթին մասնակցության դեպքում, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին ուղարկելու հստակ պահանջ,

5. դատավարական հարկադրանքի միջոցի հետագա կիրառման անհրաժեշտության վերացման դեպքում նախատեսել դատախազի կամ նրա համաձայնությամբ քննիչի կողմից այն վերացնելու պարտականություն,

6. դատավարական հարկադրանքի նշված միջոցի վրա տարածել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով խափանման միջոցների բողոքարկման համար նախատեսված դրույթներն՝ այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ (mutatis mutandis) կիրառելի են:

3. **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից:

4. **Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման դեպքում կբացառվի քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կալանավորված անձին մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ առանց հիմնավոր պատճառաբանության (կամ կամայական կերպով) տեսակցությունն արգելելու պրակտիկան: Սա իր հերթին հավելյալ խթան կհանդիսանա ազատությունից զրկված անձանց կողմից օրինապահ վարքագծի դրսևորման համար:

Օրենսդրական փաթեթի ընդունումը կնպաստի նաև ազատությունից զրկված անձանց ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապերի ամրապնդմանը՝ նվազեցնելով կալանքի

տակ գտնվելու սահմանված կարգի չարամիտ խախտման դեպքերը, ինքնավնասումների ու այլ խնդրահարույց իրավիճակներն ազատությունից զրկման վայրերում:

Ի վերջո, կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ արգելելու ընթացակարգը լիովին կհամապատասխանի միջազգային չափանիշներին:

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 1543-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 1543-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: